Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՑԱՄԱՔԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Սիրիայի Արաբական Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր,

ձգտելով ամրապնդել երկու երկրների միջև բարեկամական կապերը և ընդլայնել համագործակցությունը տնտեսության և զբոսաշրջության ոլորտներում,

ցանկանալով հեշտացնել բեռների և ուղևորների միջազգային փոխադրումները իրենց երկրների միջև, ինչպես նաև տարանցիկ փոխադրումները միմյանց տարածքով,

պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Սույն Համաձայնագրի կիրառումը տարածվում է երկու երկրների միջև, ինչպես նաև տարանցիկ՝ իրենց տարածքով, երրորդ երկիր ուղևորների և բեռների միջազգային ցամաքային փոխադրումների վրա, որոնք կկատարվեն Պայմանավորվող կողմերից մեկի երկրում գրանցված տրանսպորտային միջոցով:

Հոդված 2

Համաձայնագրում օգտագործվող տերմինները նշանակում են.

ա) «փոխադրող» տերմինը նշանակում է ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության կամ Սիրիայի Արաբական Հանրապետության քաղաքացի կամ ռեզիդենտ, որին, ըստ Պայմանավորվող կողմերի երկրներում գործող օրենքների, թույլատրված է կատարել ուղևորների և բեռների միջազգային փոխադրումներ դրանց համար նախատեսված ճանապարհներով,

բ) «տրանսպորտային միջոց» տերմինը նշանակում է մեխանիկական ընթացք ունեցող ճանապարհային միջոց, որը նշանակում է.

- ուղևորների փոխադրումների ժամանակ՝ տրանսպորտային միջոց, որը նախատեսված է ուղևորներ փոխադրելու համար և ունի ոչ պակաս 9 նստատեղ և գրանցված է Պայմանավորվող կողմերից մեկի տարածքում,

- բեռների փոխադրումների ժամանակ՝ բեռնատար ավտոմեքենա, բեռնատար քարշակ կամ նշված ավտոմեքենաները կցորդով կամ կիսակցորդով, որոնք գրանցված են Պայմանավորվող կողմերից մեկի տարածքում,

գ) «ուղևորների կանոնավոր փոխադրում» տերմինը նշանակում է ուղևորների փոխադրում նախօրոք համաձայնեցված երթուղով, ժամանակացույցով, որտեղ նշված են ուղևորների՝ սկզբնական, վերջնական և միջանկյալ նստեցման և իջեցման կետերը՝ նախապես սահմանված սակագներով,

դ) «կազմակերպված տարանցիկ փոխադրման ծառայություն» տերմինը նշանակում է ուղևորների և նրանց անձնական իրերի տարանցիկ փոխադրում, որն սկսվում է Պայմանավորվող կողմերից մեկի տարածքում և վերջանում մի երրորդ երկրի տարածքում՝ մյուս Պայմանավորվող կողմի երկրի տարածքով, առանց վերջինիս տարածքում որևէ ուղևոր վերցնելու կամ իջեցնելու,

ե) «փակ դռների ծառայություն» (զբոսաշրջիկների փոխադրում) տերմինը նշանակում է ուղևորների որոշակի խմբի փոխադրում ճանապարհորդության երթուղով, որը սկսվում և վերջանում է տրանսպորտային միջոցի գրանցման երկրում՝ առանց մյուս երկրում ուղևորների իջեցման կամ նստեցման,

զ) «ոչ կանոնավոր փոխադրում» տերմինը նշանակում է, որ ճանապարհորդությունը սկսվում է Պայմանավորվող կողմերից մեկի տարածքում, որտեղ գրանցված է տրանսպորտային միջոցը, և վերջանում ժամանման կետում, որը գտնվում է մյուս Պայմանավորվող կողմի տարածքում՝ պայմանով, որ տրանսպորտային միջոցը դատարկ վերադառնա գրանցման երկիր և ուղևորները վերադառնալու համար օգտագործեն այլ տրանսպորտային միջոց:

Հոդված 3

Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի տրանսպորտային միջոցները և ուղևորները իրենց անձնական ուղեբեռով մուտք են գործում մյուս Պայմանավորվող կողմի պետության տարածք տվյալ երկրում գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 4

Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի տրանսպորտային միջոցները և ուղևորները, իրենց անձնական ուղեբեռով, Պայմանավորվող կողմերի տարածքով երրորդ երկրի տարածք կարող են անցնել տարանցիկ համարվող ճանապարհներով՝ Պայմանավորվող կողմերի երկրներում գործող օրենսդրությունների համապատասխան:

Հոդված 5

Պայմանավորվող կողմերին պատկանող դատարկ տրանսպորտային միջոցները չեն կարող մյուս Պայմանավորվող կողմի պետության տարածք մուտք գործել առանց վերջինիս համաձայնության՝ տրանսպորտային միջոցի պատկանելության Պայմանավորվող կողմի պետության տարածք կամ երրորդ երկիր ուղևորներ փոխադրելու համար:

Հոդված 6

Պայմանավորվող կողմերի ուղևորներ փոխադրող կազմակերպություններին կամ գործակալություններին թույլատրվում է իրենց ներկայացուցչությունները կամ գործակալությունները բացել մյուս Պայմանավորվող կողմի պետության տարածքում տվյալ երկրում գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 7

Պայմանավորվող կողմերից մեկի արտոնագրված փոխադրողը կարող է կատարել կանոնավոր, ինչպես նաև տարանցիկ փոխադրումներ մյուս Պայմանավորվող կողմի տարածքում Պայմանավորվող կողմի իրավասու մարմիններից նախապես մեկ տարվա համար թույլատվություն ստանալուց հետո:

Հոդված 8

1. Զբոսաշրջիկների փոխադրումը տեղի է ունենում այն դեպքում, երբ գրանցված տրանսպորտային միջոցը փոխադրում է ուղևորների խումբ, հետևյալ դեպքերում.
ա) փակ դռների ծառայություն (զբոսաշրջիկներ),
բ) ոչ կանոնավոր փոխադրում,
գ) պատահական տարանցիկ փոխադրման ծառայություն:
2. Պատահական զբոսաշրջության փոխադրումը չի ենթարկվում նախնական արտոնագրման, բայց ենթարկվում է Պայմանավորվող կողմերի երկրներում գործող օրենքներին և ակտերին:

Հոդված 9

Պայմանավորվող կողմերի տարածքում գրանցված տրանսպորտային միջոցի վարորդը պարտավոր է յուրաքանչյուր ուղևորության ընթացքում իր հետ ունենալ փոխադրվող ուղևորների ցուցակը (մանիֆեստը)՝ հավելումն այն փաստաթղթերի, որոնք կնախատեսի սույն Համաձայնագրում սահմանված կարգով ստեղծված Համատեղ հանձնաժողովը:

Հոդված 10

1. Մինչև Համատեղ հանձնաժողովի նիստի կայացումը և իր իրավասության շրջանակներում որոշման ընդունումը, համաձայն 27-րդ Հոդվածի, ուսումնասիրելու համար Պայմանավորվող կողմերի միջև բեռների փոխադրման և տարանցիկի կազմակերպման հարցերը, խնդրո առարկա փոխադրումը կունենա բոլոր հնարավոր դյուրացումները Պայմանավորվող կողմերի տարածքներում՝ համաձայն Պայմանավորվող կողմերի երկրներում գործող օրենքների և նույնանման գործարքների սկզբունքի, եթե այդ փոխադրումը կատարվում է Պայմանավորվող կողմերից մեկի տարածքում գրանցված տրանսպորտային միջոցով:
2. Համատեղ հանձնաժողովը բեռնափոխադրման կազմակերպման հարցերն ուսումնասիրելու համար իր առաջին նիստը գումարում է ոչ ուշ, քան 3 ամիս անց սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո, և իր առաջարկությունները ներկայացնում է Պայմանավորվող կողմերի իրավասու պետական մարմիններին՝

համապատասխան որոշումներ ընդունելու համար:

Հոդված 11

Պայմանավորվող կողմերից մեկի տարածքում բեռնված տրանսպորտային միջոցը, որը ուղևորվում է դեպի մյուս Պայմանավորվող կողմի տարածք, կարող է վերադարձի ճանապարհին բեռներ փոխադրել իր գրանցման երկիր կամ այլ երկիր՝ մյուս Պայմանավորվող կողմի իշխանությունների հատուկ թույլտվությունն ստանալուց հետո:

Հոդված 12

Զենքերի, զինամթերքի, ռազմական սարքավորումների, պայթուցիկ նյութերի և այլ վտանգավոր նյութերի փոխադրումները Պայմանավորվող կողմերի միջև և նրանց տարածքով երրորդ երկիր կարող են կատարվել միայն հատուկ և բացառիկ թույլատվության դեպքում:
Արգելվում է այն նյութերի փոխադրումը և տարանցումը, որոնք կարող են վնաս հասցնել մարդկանց առողջությանը, ինչպես նաև շրջակա միջավայրին և կենդանական աշխարհին:

Հոդված 13

Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի փոխադրողները մյուս Պայմանավորվող կողմի տարածքում փոխադրումներ կատարելիս վճարում են այն բոլոր հարկերը, մաքսերը և այլ վճարները, որոնք նախատեսված են տվյալ Պայմանավորվող կողմի երկրում գործող օրենսդրությամբ:

Հոդված 14

Սույն Համաձայնագրի դրույթները Պայմանավորվող կողմերից որևէ մեկի փոխադրողին իրավունք չեն ընձեռում կատարել ուղևորների կամ բեռների փոխադրում մյուս Պայմանավորվող կողմի տարածքում գտնվող երկու կետերի միջև:

Հոդված 15

Պայմանավորվող կողմերից մեկի փոխադրողները չեն կարող ուղևորների և բեռների փոխադրում կատարել մյուս Պայմանավորվող կողմի և այլ՝ երրորդ երկրի տարածքների միջև մինչև մյուս Պայմանավորվող կողմի համապատասխան իրավասու պետական մարմինների կողմից տրված հատուկ թույլատվություն չլինի:

Հոդված 16

Եթե Պայմանավորվող կողմերից մեկին պատկանող տրանսպորտային միջոցի քաշն ու չափերը գերազանցում են մյուս Պայմանավորվող կողմի երկրի կողմից սահմանվածները, ապա համապատասխան իրավասու պետական մարմիններից պետք է ստանալ հատուկ համաձայնություն փոխադրում կատարելու համար:

Հոդված 17

Պայմանավորվող կողմերից մեկի տարածքում տրանսպորտային միջոցի կամ նրա վարորդի հետ ճանապարհատրանսպորտային պատահար տեղի ունենալու դեպքում այն Պայմանավորվող կողմի համապատասխան իրավասու պետական մարմինները, որի տարածքում տեղի է ունեցել պատահարը, մյուս Պայմանավորվող կողմի համապատասխան իրավասու պետական մարմինների պահանջով ուղարկում են պատահարի մասին կազմված արձանագրության պատճենը:

Հոդված 18

Սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան փոխադրում կատարող յուրաքանչյուր տրանսպորտային միջոց պարտավոր է իր հետ ունենալ բոլոր իրավական փաստաթղթերը, որոնք պահանջվում են տվյալ երկրում գործող օրենսդրությամբ, որտեղ կատարվում է փոխադրումը:

Հոդված 19

1. Վառելիքը, որը գտնվում է տրանսպորտային միջոցների վրա տեղադրված գործարանային արտադրության բաքերում, ազատվում է ցանկացած հարկերից, մաքսերից և այլ վճարներից:

2. Պայմանավորվող կողմերից մեկի խափանված մեքենաների վերանորոգման համար նախատեսված պահեստամասերը սույն Համաձայնագրի դրույթների հիման վրա փոխադրում կատարելու ընթացքում համարվում են ժամանակավոր ներմուծման իրավիճակում և ազատվում են դրանց փոխադրման համար սահմանված հարկերից, մաքսերից և այլ վճարներից:

Օգտագործված պահեստամասերը հետ տանելը կամ դրանց ոչնչացումը պետք է կատարվի Պայմանավորվող այն կողմի մաքսային վարչության հսկողության տակ, որի տարածքում կատարվել է վերանորոգումը (պահեստամասերի փոխումը), կամ անվճար հանձնվի համապատասխան իշխանություններին:

Հոդված 20

Պայմանավորվող կողմերից մեկին պատկանող տրանսպորտային միջոցի վարորդները և փոխադրողները փոխադրումներ կատարելիս ղեկավարվում են տվյալ երկրում գործող օրենսդրությամբ, ճանապարհային փոխադրման և երթևեկության կանոններով և այլ ակտերով, որոնք գործում են տվյալ Պայմանավորվող կողմի տարածքում:

Հոդված 21

1. Եթե Պայմանավորվող կողմերից մեկի փոխադրողը սույն Համաձայնագրի դրույթների խախտում է կատարում մյուս Պայմանավորվող կողմի տարածքում, ապա մյուս Պայմանավորվող կողմի համապատասխան իշխանությունները կարող են առանց խախտելու այն երկրի գործող դրույթները (օրենքները), որի տարածքում կատարվել է խախտումը, տեղեկացնել Պայմանավորվող առաջին կողմի համապատասխան իշխանություններին:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված խախտման դեպքում Պայմանավորվող կողմի համապատասխան իրավասու պետական մարմինները, որի տարածքում կատարվել է խախտումը, կարող են դիմել մյուս Պայմանավորվող կողմի իրավասու մարմիններին.

ա) օրինախախտ փոխադրողին կատարել գրավոր զգուշացում, որտեղ նշվում է, որ խախտման կրկնության դեպքում օրինախախտը մասնակիորեն կամ լրիվ զրկվում է իրեն պատկանող կամ իր կողմից օգտագործվող տրանսպորտային միջոցով փոխադրումներ կատարել այն Պայմանավորվող կողմի պետության տարածքում, որտեղ կատարվել է խախտումը,

բ) օրինախախտ փոխադրողին ժամանակավորապես, մասնակիորեն կամ լրիվ զրկել փոխադրումներ կատարելու իրավունքից այն Պայմանավորվող կողմի տարածքում, որտեղ կատարվել է խախտումը:

3. Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինները տեղեկացնում են միմյանց օրինախախտ փոխադրողի նկատմամբ կիրառված միջոցառումների մասին:

Հոդված 22

Ֆինանսական վճարումները, որոնք ծագում են սույն Համաձայնագրի դրույթների իրագործման ընթացքում, կատարվում են մուտքի և տարանցման երկրում՝ համաձայն փոխանցման մասին ֆինանսական օրենքների, ակտերի և հրամանագրերի:

Հոդված 23

Սույն Համաձայնագրի դրույթների հիման վրա կատարվող բեռնափոխադրումը ենթարկվում է Պայմանավորվող կողմերի երկրներում գործող օրենսդրությանը:

Ցանկացած տրանսպորտային միջոց, որը կատարում է միջազգային փոխադրում, պետք է իր հետ ունենա Պայմանավորվող կողմերի երկրներում գործող օրենսդրություններին համապատասխան պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Հոդված 24

Պայմանավորվող կողմերը պարտավորվում են ձեռնարկել այն բոլոր միջոցառումները, որոնք հնարավորին չափ դյուրացնում, պարզեցնում և արագացնում են մաքսային, ինչպես նաև ուղևորների և բեռների փոխադրումների

հետ կապված ձևականությունները:

Պայմանավորվող կողմերը երաշխավորում են, որ հնարավորության սահմաններում օգնություն կցուցաբերեն մյուս Պայմանավորվող կողմի՝ իրենց տարածքում ուղևորներ և բեռներ փոխադրող տրանսպորտային միջոցներին:

Հոդված 25

Սույն Համաձայնագրի դրույթներով՝ տրանսպորտային միջոցների, ուղևորների և բեռների ապահովագրությունը ենթարկվում է տրանսպորտային միջոցների գրանցման երկրի՝ գործող ապահովագրության դրույթների կազմակերպչական կետերին և երկրի օրենսդրությամբ կիրառվում է վնասների նկատմամբ, որոնք կարող են պատահել փոխադրման ընթացքում:

Հոդված 26

Բեռների տարանցիկ փոխադրումը Պայմանավորվող կողմերից մեկի տարածքով ենթարկվում է տվյալ Կողմի մաքսային ապահովագրությունների օրենքներին:

Համատեղ հանձնաժողովը կից արձանագրությամբ սահմանում է այս ապահովագրությունների վճարման ուղիները և ձևերը՝ համաձայն Պայմանավորվող կողմերի երկրներում գործող օրենսդրությունների:

Հոդված 27

Սույն Համաձայնագրի կատարման ապահովման նպատակով Պայմանավորվող կողմերից հավասար թվով ներկայացուցիչների մասնակցությամբ ստեղծվում է Համատեղ հանձնաժողով, որի իրավասությունների մեջ մտնում են.

ա) հսկել սույն Համաձայնագրի իրագործումը,

բ) ուսումնասիրել և պատրաստել առաջարկություններ այն հարցերի լուծման շուրջ, որոնք արգելակում են սույն Համաձայնագրի լրիվ իրագործումը, և որոնք համապատասխան իշխանությունների կողմից անմիջական լուծում չեն գտնում,

գ) քննել այն բոլոր հարցերը, որոնք մտնում են սույն Համաձայնագրի շրջանակների մեջ, և առաջարկություններ անել դրանց անհրաժեշտ լուծում տալու համար,

դ) քննել ճանապարհային փոխադրման հետ կապված բոլոր հարցերը համատեղ համաձայնության գալու մասին,

ե) տեղական իշխանությունների համագործակցությամբ որոշել սույն Համաձայնագրի 6-րդ հոդվածով նախատեսված ներկայացուցչությունների և գործակալությունների տեղերը:

Համատեղ հանձնաժողովը պարբերաբար հրավիրվում է Հայաստանի Հանրապետությունում և Սիրիայի Արաբական Հանրապետությունում՝ Պայմանավորվող կողմերից որևէ մեկի պահանջով:

Համատեղ հանձնաժողովի աշխատանքների ցանկը կազմվում է Պայմանավորվող կողմերի կողմից դիվանագիտական ուղիներով:

Համատեղ հանձնաժողովի նիստերի որոշումներն ու առաջարկությունները արձանագրության առարկա են և ենթակա են հաստատման Պայմանավորվող կողմերի իրավասու պետական մարմինների կողմից՝ հնարավորինս կարճ ժամկետում:

Համատեղ հանձնաժողովը կարող է հոդվածներում լրացումներ և փոփոխություններ կատարելու առաջարկություններ անել, որոնք ենթակա են հաստատման Պայմանավորվող կողմերի համապատասխան իրավասու պետական մարմինների կողմից:

Հոդված 28

Սույն Համաձայնագրի կատարման համար պատասխանատու են՝

ա) հայկական կողմից՝ տրանսպորտի և հաղորդակցության նախարարությունը,

բ) սիրիական կողմից՝ տրանսպորտի նախարարությունը:

Հոդված 29

Պայմանավորվող կողմերը պայմանավորվում են, որ անհրաժեշտ միջոցառումներ կիրականացնեն միմյանց երկրների միջև բեռների երկաթուղային փոխադրումների իրականացման և զարգացման ուղղությամբ:

Հոդված 30

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Պայմանավորվող կողմերի երկրներում գործող օրենսդրությունների համաձայն՝ այն հաստատելու վերաբերյալ հայտագրերի փոխանակման պահից:

Սույն Համաձայնագիրը կնքվում է 1 տարի ժամանակով: Եթե Պայմանավորվող կողմերից որևէ մեկը Համաձայնագրի ժամկետը լրանալուց երեք ամիս առաջ գրավոր չհայտնի մյուս Կողմին այն դադարեցնելու իր ցանկության մասին, ապա Համաձայնագրի գործողությունը ինքնաբերաբար կերկարաձգվի ևս 1 տարի և այդպես շարունակ:

Կատարված է Դամասկոս քաղաքում 1995 թվականի մարտի 16-ին, երկու բնօրինակով, հայերեն և արաբերեն, ընդ որում երկու բնօրինակներն էլ հավասարազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2001 թվականի փետրվարի 21-ից: